ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հուլիսի 13-ից 22-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղման

1. **Անուն, Ազգանուն**
   Տիգրան Ավինյան

2. **Զբաղեցրած պաշտոն**
   ՀՀ փոխվարչապետ

3. **Գործուղման ամսաթիվ և վայր**
   Նյու-Յորք՝ 13.07-18.07, Բոստոն՝ 18.07-22.07

4. **Գործուղման նպատակը**
   Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Տնտեսական և սոցիալական խորհրդի բարձր մակարդակի քաղաքական ֆորումի 2019 թվականի նստաշրջանին «Մարդկանց հնարավորությունների ընդլայնումը և ներառականության ու հավասարության ապահովումը» թեմայի ներքո Հայաստանի Հանրապետությունում բարեփոխումների ընթացիկ օրակարգի, կայուն զարգացման նպատակների իրագործմանն ուղղված շրջանակային քաղաքականությունների ներկայացում, երկկողմ հանդիպումներ բարձրաստիճան պաշտոնյաների հետ՝ առևտրատնտեսական և փոխգործակցության ընթացիկ օրակարգի ընդլայնման նպատակով:

5. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր, ձեռք բերված պայմանավորվածություններ**
   Հուլիսի 15-ին մասնակցել եմ ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցչության նախաձեռնությամբ՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և Եվրասիական միության հետ համագործակցությամբ կազմակերպված **«Կլիմայական փոփոխությունները հաշվի առնող տնտեսություններ. էներգետիկ արդյունավետությունը՝ հանուն կայուն զարգացման նպատակների»** խորագրով լիագումար քննարկմանը՝ որպես հիմնական բանախոս: Ներկայացրել եմ ՀՀ էներգետիկ շուկայի զարգացման առաջնարհերթությունները և զարգացման միտումները, էներգախնայող համակարգերի ներդրմանն ուղղված ընթացիկ և կայուն զարգացման նպատակների իրականացմանը նվիրված ներպետական և տարածաշրջանային գործընթացները, ՀՀ կառավարության հանձնառությունը՝ կանխատեսելի սակագնային քաղաքականության և օրենսդրական դաշտի կատարելագործման ճանապարհով՝ էներգախնայող համակարգերի առավելագույն լայն ծածկույթ ապահովելու ուղղությամբ:

Անդրադարձ եմ կատարել Հայաստանի Հանրապետությունում կայուն էներգետիկայի և խելացի տնտեսության կառուցման գործում էներգաարդյունավետ լուծումների գործնական կիրառմանը: Մասնավորապես ներկայացրել եմ Հայաստանի գրանցած հաջողությունները հանրային և քաղաքային շինությունները էներգախնայող համակարգերով վերազինելու գործում: Նշել եմ, որ շրջանառու ֆոնդի և միջազգային դոնոր ընկերությունների հետ համագործակցության արդյունքում, ՀՀ-ն ունի 50 տոկոս էներգիայի խնայողություն 64 հանրային օբյեկտներում (ավելի քան 160 շենքեր և 9 քաղաքային լուսավորման համակարգեր):

Սևանա լճի օրինակով ներկայացրել եմ Հայաստանում կլիմայական փոփոխությունների ուղղակի ազդեցությունը և հավելել, որ ներկայումս կլիմայական փոփոխություններին դիմակայելու համար աշխատանքներ են տարվում խելացի տնտեսություն կառուցելու և խնդիրներին համակարգային լուծումներ տալու ուղղությամբ:

Նույն օրը **Իռլանդիայի երեխաների և երիտասարդության հարցերով նախարար Քեթրին Զափոնեի** հետ քննարկել ենք միջազգային հարթակներում, հատկապես՝ ՄԱԿ-ում, փոխգործակցության ընդլայնման, խորհրդարանական դիվանագիտության ակտիվացման, տնտեսական օրակարգի ձևավորմանն ուղղված առաջիկա անելիքները:

Անդրադարձ եմ կատարել Իռլանդիայի հետ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործընկերության հաստատման հեռանկարներին: Որպես փորձի փոխանակման հնարավորություն ներկայացրել եմ Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի գործունեությունը՝ ընդգծելով, որ Թումո ստեղծարար կենտրոնը դարձել է Հայաստանի յուրօրինակ բրենդը աշխարհում և մեծ ներդրում է ունեցել և շարունակում ունենալ երեխաների ու երիտասարդների կրթամշակութային զարգացման գործում:

Հաշվի առնելով իռլանդական մեծաքանակ սփյուռքին ներգրավելու գործում ունեցած հաջողությունները՝ Քեթրին Զափոնեն իր պատրաստակամությունն է հայտնել փորձով և գիտելիքներով կիսվել հայաստանյան գործընկերների հետ:

Ընդգծել եմ ԵՄ հետ մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ բանակցությունների շուտափույթ մեկնարկի կարևորությունը:

Հաջորդիվ՝ **Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամ Տատյանա Վալովայայի** հետ քննարկել ենք Եվրասիական միության շրջանակներում ինտեգրմանն ուղղված նախաձեռնությունները:

Ասել եմ, որ Հայաստանում էներգաարդյունավետության շուկան ունի զարգացման զգալի ներուժ և իրականացվող ծրագրերը շոշափելի արդյունքներ են տալիս, ընդ որում՝ էներգախնայողությունը և էներգաարդյուավետությունը էներգետիկ ոլորտի զարգացման առաջնահերթություններն են: Էներգախնայողության ներուժ ունեն տրանսպորտային ենթակառուցվածքները, արդյունաբերությունը,

բազմաբնակարան շենքերը, բյուջետային հանրային հատվածը, վառելիքաէներգետիկ բնագավառը: Ընդգծել եմ, որ ի տարբերություն հանրային նշանակության շինություններում էներգաարդյունավետ համակարգերին սահուն անցման, բազմաբնակարան շենքերում պատկերն այլ է, ինչի պատճառն անկատար իրավապայմանագրային հարաբերություններն ու առկա սակավ ֆինանսական միջոցներն են, իսկ երբեմն էլ՝ էներգաարդյունավետ համակարգին անցում կատարելու համար խրախուսումների բացակայությունը: Նշել եմ, որ ՀՀ կառավարությունը շարունակելու է գործնական քայլեր ձեռնարկել էներգախնայողության մշակույթի զարգացման ամրապնդման ուղղությամբ:
Կարևորել ենք Եվրասիական միության շրջանակներում նավթի, նավթամթերքների, գազի, ինչպես նաև էլեկտրաէներգիայի միասնական շուկայի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Հաջորդիվ՝ **«Հայերը բանկային և ֆինանսական ոլորտներում»** (Armenians in Banking & Finance) ցանցի անդամներին ներկայացրել եմ Հայաստանի կառավարության ռազմավարական առաջնահերթությունները և տնտեսական համակարգի ընթացիկ միտումները: Ընդգծել եմ, որ կառավարության համար երկրի զարգացման չափորոշիչը անհատի և հասարակության բարեկեցությունն է:

Ի պատասխան հնչեցված հարցադրումների նշել եմ, որ Հայաստանը կարող է հաղթահարել իր ռեսուրսային և աշխարհագրական սահմանափակումները, եթե տնտեսական զարգացման մոդելը հիմնվի ստեղծարար մտքի և նորարարական գաղափարների վրա: Անդրադառնալով ՀՀ կառավարության ներառականության մոդելին՝ նշել եմ, որ յուրաքանչյուրը պետք է ստանձնի Հայաստանի զարգացման պատասխանատվության իր բաժինը և անկախ Հայաստանից դուրս գտնվելու հանգամանքից՝ իր գիտելիքներով և փորձով մասը դառնա ընթացիկ բարեփոխումների:
Անդրադարձ եմ կատարել Հայաստանի տնտեսության մրցակցային առավելություններին, գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քայլերին, քաղավիացիայի և զբոսաշրջության զարգացման տեսլականին, երկրի ֆինանսական համակարգի առանձնահատկություններին, հանրային կառավարման համակարգի բարեփոխումներին և հանրային ծառայությունների թվայնացմանը: Ներդրումային հնարավորությունները ներկայացնելիս անդրադարձ եմ կատարել կառավարության կողմից ստեղծված Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի գործունեությանը, ապագա ծրագրերին և ներդրումային ֆոնդերի վերաբերյալ օրենսդրական կարգավորումներին: Կարևորելով փոքր և միջին ձեռնարկությունների՝ երկրի տնտեսական կյանքում դերակատարությունը, ներկայացրել եմ ՓՄՁ ոլորտը զարգացնելուն ուղղված ընթացիկ աշխատանքները:

Նշել եմ, որ կառավարության առաջնահերթություններից է Հայաստանի ու Սփյուռքի միջև կարողությունների, տաղանդի, գիտելիքների և փորձի փոխանակման և դրա նպատակով տարբեր գործիքների և ծրագրերի գործարկմանն ուղղված աշխատանքների իրականացումը: Քննարկման մասնակիցների խնդրանքով ներկայացրել եմ սփյուռքին ներգրավելու ուղղությամբ առկա նախաձեռնությունները և ֆինանսական շուկաներում կարիքների գնահատման հիման վրա «Սփյուռքի պարտատոմսեր» թողարկելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Հուլիսի 15-ն ամփոփել եմ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության ընդունելությանը մասնակցությամբ, որին ներկա էին ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը, ՀԲԸՄ կենտրոնական վարչության անդամներ Նազարեթ Ֆեստեկջյանը, Արդա Հարութունյանը, Հայկ Արիյանը, հայազգի բարերար Ասո Թավիթյանը, Չիկագոյում Հայաստանի պատվո հյուպատոս Օսկար Թաթոսյանը և այլ հյուրեր: Մտքեր ենք փոխանակել Հայաստանում ընթացող գործընթացներին Սփյուռքի ներգրավման արդյունավետ ուղիների, ինստիտուցիոնալ բարեփոխումների և համատեղ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցերի վերաբերյալ:

Հուլիսի 16-ին աշխատանքային քննարկում եմ ունեցել **հայազգի բարերար Ասո Թավիթյանի** հետ: Ներկա էին նաև «Carnegie» կորպորացիայի նախագահ Վարդան Գրեգորյանը, «Metlife» ապահովագրական ընկերության նախկին նախագահ Սթիվեն Կանդարյանը և «Insight Venture Partners» ընկերության գործադիր տնօրեն Փիթեր Սոբիլոֆը:

Զրուցակիցներիս խնդրանքով մանրամասն ներկայացրել եմ ՀՀ տնտեսական և հանրային կառավարման բարեփոխումների օրակարգը և ռազմավարական առաջնահերթությունների իրականացմանը միտված ընթացիկ նախաձեռնությունները:

Հաշվի առնելով Թավիթյան հիմնադրամի և անձամբ Ասո Թավիթյանի զգալի ավանդը Հայաստանի համար ապագայի առաջնորդներ կրթելու գործում, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում ունեցած գիտական ներդրումը և գրանցած հաջողությունները՝ պարոն Թավիթյանին փոխանցեցի Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարանի (ՀԱՊՀ) գիտական խորհրդի որոշմամբ նրան շնորհված ՀԱՊՀ պատվավոր դոկտորի վկայականը:

Այնուհետև, ՄԱԿ-ի կենտրոնակայանում հանդիպել եմ **ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կառավարիչ Աքիմ Շտայների հետ**: Նշել եմ, որ Հայաստանը մեծ նշանակություն է տալիս ՄԱԶԾ հետ ծավալուն և արդյունավետ փոխգործակցությանը: Հաշվի առնելով կառավարության բարեփոխումների օրակարգը՝ Հայաստանը ցանկանում է ընդլայնել համագործակցությունը ՄԱԶԾ հետ և ներգրավվել առավել հավակնոտ ծրագրերում: Հանրային կառավարման

բարեփոխումները, թվայնացումը և «Աշխատիր Հայաստան» ծրագիրը առանձնացվել են որպես նախաձեռնություններ, որոնց իրականացման գործում խնդրել եմ ՄԱԶԾ լրացուցիչ աջակցությունը:
Ընդգծել եմ, որ Օրակարգ 2030-ի սկզբունքների ներդրումը և Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) արդյունավետ կյանքի կոչումը կարևոր գործիք է կառավարության նախաձեռնած հավակնոտ բարեփոխումների համատեքստում: Հավելել եմ, որ Օրակարգ 2030-ը և ԿԶՆ-ները կարող են ուղղորդող դեր խաղալ Հայաստանի երկարաժամկետ զարգացման ռազմավարության համար:
Աքիմ Շտայները նշել է, որ նախատեսվում է Հայաստանի հետ համագործակցության ուղղություններին անդրադարձ կատարել ներկայումս մշակվող երկրի զարգացման շրջանակային փաստաթղթի կազմման ընթացքում:
Խոսել եմ նաև ՀՀ թվային փոխարկերպման օրակարգի մասին՝ որպես ՀՀ-ում հանրային կառավարման բարեփոխումների հիմնասյուն և ընդգծելով SS դերը ՀՀ տնտեսական և գիտակրթական բնագավառներում՝ Աքիմ Շտայներին հրավիրեցի մասնակցելու հոկտեմբերի 6-9-ը Երևանում անցկացվելիք Տեղեկատվական տեխնոլոգիաների 23-րդ համաշխարհային համաժողովին:
Նույն օրը հանդիպել եմ **ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալ, առավել նվազ զարգացած, դեպի ծով ելք չունեցող զարգացող և փոքր կղզիական զարգացող երկրների հարցերով ՄԱԿ-ի բարձր հանձնակատար տիկին Ֆեկիտամոելոա Կատոա Ուտոյկամանուի** հետ:
Կարևորել ենք դեպի ծով ելք չունեցող երկրների համար ապրանքների անխոչընդոտ փոխադրման հնարավորությունները, ծովային նավահանգիստներին ու համաշխարհային շուկաներին հասանելիության ապահովմանն ուղղված առարկայական ծրագրերի իրականացումը:
Ներկայացրել եմ Հայաստանի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները ու դրանից բխող մարտահրավերները: Այս համատեքստում ընդգծել եմ, որ Հայաստանը ոչ միայն աշխարհագրական դիրքի բերումով չունի անմիջական ելք դեպի ծով, այլև չորս սահմաններից երկուսը փակ են: Առաջարկել եմ տիկին Ուտոյկամանուին Թուրքիայի կողմից Հայաստանի սահմանը փակ պահելու հարցի կարգավորման նպատակով գործնական քայլեր ձեռնարկել:
Զրուցակցիս ուշադրությունը հրավիրել եմ նաև Թուրքիայի կողմից Արաքս գետի ջրային ռեսուրսների համալիր օգտագործմամբ ջրամբարաշինության ծրագրերի հետևանքով տարածաշրջանի ազդակիր երկրներում հիդրոլոգիական և կենսոլորտային հավասարակշռության խախտման բացասական ազդեցության վրա:
Այնուհետև, **«Մարդկանց հնարավորությունների ընդլայնումը և ներառականության և հավասարության ապահովումը» վերնագրով ՄԱԿ-ի Կայուն զարգացման հարցերով բարձր մակարդակի քաղաքական ֆորումում**

անդրադարձել եմ լավ կառավարման և ազգային տաղանդի խրախուսման միջոցով Հայաստանի կառավարության ռազմավարական առաջնահերթությունների ապահովման հիմնարար սկզբունքներին: Մասնավորապես, ներկայացրել եմ կրթական ենթակառուցվածքների, տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների, երիտասարդների կարողությունների և գործարար հմտությունների զարգացմանն ուղղված կառավարության հանձնառությունը:

Հուլիսի 17-ին Իրաքի ծրագրման նախարար Նուրի Ալ-Դուլեյմիի հետ որոշել ենք ձևավորել Հայաստան-Իրաք տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի առաջիկա նիստի օրակարգը:

Պայմանավորվածություն ենք ձեռք բերել առաջիկայում ավելի մանրամասն ուսումնասիրել Հայաստանի ճարտարապետահատակագծային և շինարարական ընկերությունների՝ Իրաքում տեղի ունեցող շինարարական ծրագրերին մասնակցության հնարավորությունը:

Առաջարկել եմ Իրաքում SS բնագավառի զարգացման և Հայաստանում առկա թվայնացման համակարգերի փորձը իրաքյան գործընկերների ներկայացնելու նպատակով առաջիկայում հստակեցնել փոխգործակցության տարբերակները:

Կարևորել ենք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Իրաքի Հանրապետության կրթության նախարարության միջև փոխգործակցության զարգացման անհրաժեշտությունը:

Նույն օրը **ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի աղետների ռիսկի նվազեցման գծով հատուկ հանձնակատար Մամի Միզուտորիի** հետ քննարկել ենք սեյսմակայունության և աղետների ռիսկի կանխարգելմանը վերաբերող մի շարք հարցեր: Մասնավորապես նշել եմ, որ Հայաստանը հանձնառու է կյանքի կոչել Կայուն զարգացման նպատակները և մտադիր է մեծացնել երկրի դիմադրողականությունը՝ համաձայն Աղետների ռիսկերի նվազեցման 2015-2030թթ. Սենդայի շրջանակային ծրագրի և Փարիզի կլիմայի համաձայնագրի առաջնահերթությունների:

Նշել եմ, որ հայ փրկարարները բավարար մասնագիտական փորձառություն ունեն և տարբեր երկրներում մասնակցում են միջազգային հումանիտար առաքելությունների և փրկարար գործողությունների: Միաժամանակ ընդգծել եմ, որ Հայաստանը տեղակայված լինելով սեյսմիկ գոտում՝ նպատակ ունի մասնագիտական հմտությունների և տեխնոլոգիական կարողությունների շարունակական զարգացմամբ կատարելագործել աղետների վաղ կանխարգելման մեխանիզմները:

Բացի այդ, նշել եմ որ ՀՀ կառավարությունը հատկապես ողջունում է դպրոցների և այլ կրթական հաստատությունների սեյսմակայունությանն առնչվող խնդիրների կարգավորմանն ուղղված նախաձեռնությունները:

Նույն օրը **Ղրղզստանի փոխվարչապետ Զամիրբեկ Ասկարովի** հետ քննարկել ենք առևտրատնտեսական համագործակցության ակտիվացման և իրավապայմանագրային բազայի կատարելագործմանը վերաբերող տարաբնույթ հարցեր և պայմանավորվածություն ենք ձեռք բերել առաջիկայում ձևավորել տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի օրակարգը: Երկուստեք կարևորել ենք միասնական էներգետիկ շուկայի ձևավորման ներուժի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Ներկայացնելով Հայաստանի էլեկտրոնային կառավարման ոլորտում առկա փորձը՝ պատրաստակամություն եմ հայտնել նորարարությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտում համատեղ ծրագրեր իրականացնել:

Այնուհետև **Լիբանանի փոխվարչապետ Ղասան Հասբանիի** հետ քննարկել ենք տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստին զուգահեռ գործարար համաժողով անցկացնելու հնարավորությունը՝ վերջինս դիտարկելով որպես համատեղ նախագծերի և տնտեսական կապերի ընդլայնման արդյունավետ հարթակ:

Ընդգծել եմ, որ Հայաստանը Լիբանանի գործարար համայնքի համար կարող է մուտք ապահովել դեպի նոր շուկաներ՝ ի շնորհիվ մոտ 180 մլն բնակչություն և 1,8 տրիլիոն ԱՄՆ դոլար ՀՆԱ ունեցող Եվրասիական միությունում անդամակցության և Եվրասիական Տնտեսական Միության և Իրանի միջև ազատ առևտրի գոտու ձևավորմանը՝ միտված ժամանակավոր համաձայնագրով սահմանված նախընտրելի մաքսասակագնային կարգավորումներին: Անդրադառնալով հայկական գինու պատմությանը և որակական առանձնահատկություններին՝ առաջարկել եմ ընդլայնել Հայաստանից Լիբանան արտահանվող գինու ծավալները:

Պայմանավորվածություն ենք ձեռք բերել համատեղ ջանքերով զարգացնել մշակութային, գիտակրթական կապերը՝ այս գործընթացին ներգրավելով Լիբանանի հայ համայնքին: Նշել եմ, որ լիբանանահայերը կարևոր կապող օղակ են երկու երկրների միջև և շնորհակալություն եմ հայտնել Լիբանանի կառավարությանը մեր հայրենակիցների ազգային ինքնության պահպանման համար լավագույն պայմաններ ապահովելու համար:

Հուլիսի 18-ին Հայաստանի կրթական բարեփոխումների վերաբերյալ մտքեր ենք փոխանակել **Ֆինլանդիայի կրթության նախարար Լի Անդերսոնի** հետ: Ներկայացրել եմ առկա խնդիրները, դրանց լուծմանն ուղղված ընթացիկ նախաձեռնությունները, «Աշխատիր Հայաստան» ծրագիրը: Պայմանավորվածություն ենք ձեռք բերել երկու երկրների կրթության ոլորտը համակարգող իրավասու մարմինների միջև շարունակաբար տեղեկատվության փոխանակման վերաբերյալ:

Հուլիսի 18-ն ամփոփել եմ **Բոստոնի գործարար համայնքի** (Armenian Business Network) հետ հանդիպմամբ, որի ընթացքում ներկայացրել եմ ՀՀ ներդրումային

հնարավորությունները, տնտեսական բարեփոխումների առաջնահերթությունները, արձանագրված տնտեսական աճի առանձնահատկությունները, գործարար միջավայրի բարելավման և արտահանման խթանմանն ուղղված քաղաքականությունները. գյուղատնտեսության, զբոսաշրջության, ենթակառուցվածքների, բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հեռանկարները:

Հուլիսի 19-ին տնտեսագետ Տարոն Աճեմօղլուի և գործարար Նուբար Աֆեյանի հետ քննարկել ենք Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը և զարգացման հեռնակարները, կառավարության գործունեությունը՝ տնտեսական աճը և ներդրումները խթանելու և նոր աշխատատեղեր ստեղծելու ուղղությամբ: Համապարփակ անդրադարձ ենք կատարել կառավարության կողմից իրականացվելիք հանրային կառավարման բարեփոխումներին:

Որոշում ենք կայացրել կանոնավոր կերպով փոխանակվել գաղափարներով ու մտքերով և քննարկել համագործակցության ինստիտուցիոնալ հարթակի ստեղծման քայլերը:

Այնուհետև հանդիպել եմ Բոստոնի հայ համայնքի հետ և ներկայացրել ՀՀ ներառական տնտեսական աճի մոդելը, մարդկային ներուժի շարունակական զարգացմանն ուղղված նախաձեռնությունները և ընդգծել, որ կառավարությունն ակնկալում է սփյուռքում կուտակած գիտելիքի և փորձի փոխանակման ճանապարհով կատարելագործել տեղական կարողությունները և նոր որակ հաղորդել Հայաստան-Սփյուռք գործընկերությանը:

Գործուղվող՝

Տիգրան Ավինյան

25.07.2019